Տեսլեամբ ահեղ եւ զուարական,
Որ երկնային զուարք ամ
Ահէ սորայ սարսեալ դողան(1)։

Վերջին տողերն, ինչպէս ընթերցողը տեսնում է, նուիրուած է Ամենափրկիչ սրբութեան։

Շահխաթունեան սորա յաջորդն է համարում Յովհաննէս եպիսկոպոսին 1658 *թուին. «յիշատակեալ ի յիշատակարանի աւետարանի միոյ»*(2)։ *Ցիրաւի, մի քայքայուած Յայսմաւուրքի մասամբ անընթեռնելի դարձած յիշատակարանի մէջ տեղեկութիւն կայ և սորա մասին. ձեռագիրը գրուած է «ի թուականութեան հայոց .ռ. հարիւր եւ ժգ թուին* (= 1664), *ի գաւառս Արարադեան, ի մայրաքաղաքս, որ կոչի Երեւան, ընդ հովանեաւ սբ ածածնիս եւ սբ Երկուերեսիս եւ սբ Յակոբիս եւ սբ Կաթուղիկէիս եւ այլ բզմ սրբոցն, որ պահապան են քաղաքիս, ի հրպութ. սբ Էջմիածնայ սրբազան կթղիսի տն Յակոբայ Ջուղայեցւոյ, եւ եպութե սբ Ամենափրկչին տր Յովանէս սրբազան վարդպի եւ աթոռակալութե սբ Գեղարդեանն Դաւիթ սրբազան եպսի, որդի ազատաց եւ մեծ ազգէ. ի յաշխարհակալութե տաճկաց եւ գանութե փոքր Շահապազի եւ խանութե Երեւանայ Ապազղուլի խանին, որ է որդի Ամիրգունոյ խանին»*(3)։ *Սոյն Յովհաննէսի ձեռքով Պօղոս երէց, որ վերոյիշեալ Սիմէոն Ջուղայեցու հօրեղբօրորդին էր, մի նկարազարդ, փոքրադիր աւետարան է տալիս* 1666 *թուին յիշատակ «ի վանս Ամենափրկչին, որ ի Հայոց Թառ»։ Աւետարանը գրուած է և նկարազարդուած Նոր Ջուղայում*(4)։

Սիմէոն կաթուղիկոսը յիշում է ապա Մատթէոս վարդապետ Ջուղայեցուն 1662 *և* 1673 *թ. թ.։ Նա նորոգել է* 1671 *թուին Թադէոս առաքեալի աջը, ըստ արձանագրութեան*(1)։

Զաքարիա Սարկաւագը յիշում է Մարկոս վարդապետ Ջուղայեցուն Յակոբ կաթուղիկոսի ժամանակ, ուրեմն 1673–1680 *թուականների մէջ*(2)։ *Սորա ժամանակն էր, երևի, երբ կատարուեցաւ Արարատեան երկրի մեծ շարժը* 1679 *թուի Յունիսի* 4*ին և վնասուեցան Գեղարդի ձորի վանքերը, որոնց թւում և Հաւուց Թառը, որ յականէ յանուանէ յիշում են Զաքարիա Սարկաւագ և ժամանակակից յիշատակարաններ*(3)։

ԺԷ. դարի վերջերին յիշւում է Ստեփանոս, «ի յիշատակարանի տօնացոյց գրոց, գրել ի սոյն մենաստանի»(4). *իսկ ԺԸ. դարի առաջին քառորդին Մաղաքիա վարդապետ. Էջմ.* N 1752 *նժ. Յայսմաւուրքը նորոգուած է «Ղզրտշվյ* (?) *Աթանասի որդի» Կարբեցու ձեռքով, «թվականիս ՌՃԿԲ* (= 1713), *հայրապետութի տն Աղէքսանդր կթղկոն յամ* (s!) *Հայոց. մեր հոգեւոր հայրն Մաղաքիայ ածարան վրդպետն յառաջնորդ սբ Ամենափրկչի»։ Միաբաններն են տէր Սահակ, տէր Ղազար, տէր Առաքել. ունի «բազում աշխատանք ի վերյ տանս»։ «Յարպատեցի (Էջմիածնից ոչ հեռու մի գիւղ) մահտեսի Գալուստն» նորոգողի սպասաւորն է։ Այս Մաղաքիայի ժամանակն էր, որ Աստուածատուր կաթուղիկոսը* (1721 *թ.) երկրաշարժից քանդուածների տեղ մի նոր եկեղեցի սկսեց շինել, գործադրելով և հնից մնացած շատ քանդակուած և այլ քարեր (պատկ.* 2), *բայց Լէզգիների (Կովկասեան լեռնականներ, Լեկք) արշաւանքով կիսատ մնաց. Աստուածատուր կաթուղիկոսը ստիպուած էր փախչել, տեղակալ թողնելով Սաղմոսավանքի առաջնորդ Յովասափ վարդապետին։ Այս ժամանակն էր, որ քուրդ*

---

(1) *Ձեռ. Էջմ.* N 1228|1204 *(տե՛ս Յաւել. 11)*։ *Այս Սիմէոն Ջուղայեցուն չպէտք է շփոթել նոյնանուն դարձեալ Ջուղայեցի իրեն «փոքր» անուանող վարդապետի հետ, որ եպիսկոպոս էր ձեռնադրուած Յակոբ կաթուղիկոսից* 1677-78 *թ. թ. եւ սորա մահուան տարին. այսինքն* 1680 *թուին. ստանում է, երեւի. Տաթեւացու «ձմեռան եւ ամառան ժողովածու քարոզգիրք»ը, Ձեռ. Էջմ.* N 2150|2138, *Նոր Ջուղայում։*

(2) *Շահխ. Բ.* 296։ *Տե՛ս եւ Ձեռ.* N 371|338։

(3) *Ձեռագիրը նորերս է (*1931, *Ապրիլ) ստացուած Աշտարակից. մատենադարանի վարիչ Սեներքերիմ Տէր Յակոբեանի սիրալիր ցուցմունքով օգտուեցայ այս յիշատակարանից։*

(4) *Ձեռ. Էջմ.* N 953 *նց*։

(1) *«Յշտկն այսպէս է գրեալ. թէ կազմեցել էր սա ի ՋԻԴ թուին. իսկ ի ՌՃԻ թուին, ես Ջուղայեցի Մատթէոս վրդպս նորոգեցի, եւ ետու յշտկ ի դուռն սբ Ամենափրկչին»։ «Դաւթար եւ ճաշուագիր անօթից եւ սպասուց» Սիմէոն կաթուղիկոսի ժամանակ կազմուած։*

(2) *Զաքարիա Սարկ. Վաղարշ.* 1870. *Ա.* 56։

(3) » » » » *Բ.* 104։ *Ջալալեան. Բ.* 127։ *Ձեռ. Էջմ.* N 548։

(4) *Շահխ. Բ.* 296։